«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Դունյա Կարապետյան

Ուսումնական հաստատություն՝ Ալ. Բլոկի անվան հ.122 դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն——————————————————————————————3

Գլուխ 1

«Սասնա ծռեր» էպոսը: Էպոսի արժեքային համակարգ ձևավորող հիմնական կողմերը——————————————————————————————5

ԳԼՈՒԽ 2

«Սասնա ծռեր» էպոսի նպատակաուղղված ուսուցումը ավագ դպրոցում——————11

Եզրակացություն——————————————————————————17

Գրականության ցանկ——————————————————————————19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում միտված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդին նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված՝ նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ: Կրթական այս նորմերի անընդհատ փոփոխվող դարում կան արժեքային գծեր, որոնց ձևավորումը բոլոր ժամանակներում մնում է արդիական և առանցքային: Ըստ հանրակրթության պետական չափորոշչի ուսուցման բոլոր փուլերում առանձնակի կարևորություն է տրվում հայրենասիրության և առհասարակ հայրենիքի գաղափարի ուսուցմանը: Չափորոշչում հայրենասիրությունը դիտարկվում է որպես արժեքային համակարգի կարևորագույն գծերից մեկը:

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Նոր սերնդի արժեհամակարգի ձավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական , ազգային արժեքներով օժտված , ազգային նկարագիր ունեցող սերունդ:
«Հայ գրականություն» առարկայի ուսուցման ողջ ընթացքում կան ծրագրային գործեր, որոնց միջոցով կարելի է ձևավորել կամ զարգացնել հայրենասիրության արժեքային գիծը աշակերտների մոտ, սակայն այդ բոլոր ստեղծագործությունների մեջ, իհարկե, առանձնանում է «Սասնա ծռեր» էպոսը: Էպոսում են խտացված մեր ժողովրդի նվիրական երազանքներն ու ցանկությունները և իրավմամբ էպոսը ինքն իրով մեկ ամբողջական հայրենասիրական դաս է, որի ճիշտ և նպատակային ուսուցումը բոլոր ժամանակների կարևորագույն մանկավարժական խնդիրներից մեկն է: Ի վերջո էպոսը կարող է դառնալ շատ կարևոր գործիք քննադատական միտք ունեցող,ինքնուրույն ,ինքնակրթությամբ մշտական զարգացումը կարևորող,բարձր պատասխանատվությամբ հասարակության անդամ,անհատ ձևովորում գործում: Անհատ, որը այս խառաշփոթ աշխարհում շատ լավ կիմանա իր տեղն ու դերը իր հայրենիքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ է ուսումնասիրել ներկայացնել էպոսում արտահայտված

գաղափարները(հայրենասիրությունը) և ներկայացնել դրանց ուսուցման մի քանի նրբություններ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ «Սասնա ծռեր» էպոսի նպատակուղղված ուսուցման գործընթացն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ՝ Ինչպե՞ս դաստիարակել հայրենասեր քաղաքացի
և ի՞նչ դեր ունի այդ գործում «Սասնա ծռեր» էպոսը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝

Դիտարկել «Սասնա ծռեր» էպոսի ուսուցման գործընթացը միջին և ավագ դպրոցական տարիքներում: Ուսումնասիրել էպոսի ուսումնասիրման մեթոդաբանական հիմքերը և ներկայացնել չափորոշչային բոլոր պահանջներին համապատասխանող ուսուցման ծրագիր:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «Հայ գրականություն» առարկայի ուսուցման բազմազան նպատակներից է աշակերտներին զինել ազգային արժեքներով: Սրանով էլ պայմանավորված է թեմայի արդիականությունը(ազգային դաստիարակության նոր, բազմազան ուղիների ու միջոցների մշակման անհրաժեշտությամբ):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ՝ Աշխատանքը բաղկացած է ներածությունից, բաղկացուցիչ երկու գլուխներից, իսկ վերջում կցված են օգտագործված գրականության ցանկն ու եզրակացությունը:

Գլուխ 1

«Սասնա ծռեր» էպոսը: Էպոսի արժեքային համակարգ ձևավորող հիմնական կողմերը

«Սասնա ծռեր» ազգային վեպը կամ «Սասունցի Դավիթ» ժողովրդական, հերոսական էպոսը, դյուցազներգությունը, ինչպես կոչվում է սովորաբար այն մասնագիտական ու հանրամատչելի գրականության մեջ, առաջին արձանագրումից՝ 1873 թվականից մինչ օրս անցել է գրառման, հասարակական ճանաչողության և գիտական ուսումնասիրության երկարամյա ճանապարհ: Էպոսն իր հնագույն առասպելական արմատներով, պատմական շերտերով, միջնադարյան քրիստոնեական աշխարհայացքի հետքերով, ժողովրդական կյանքի ու կենցաղի կենդանի պատկերներով, հերոսական բնույթով, գաղափարաբանությամբ, ազգային ինքնատիպության ու համաշխարհային էպիկական ավանդույթի հետ ընդհանրությունների համադրությամբ մեր բանահյուսության, ավելի լայն մշակույթի ամենայուրահատուկ, ընդգրկուն, բայց միաժամանակ խորհրդավոր երևույթներից է: Միաժամանակ էպոսը անգերազանցելի է մեր գրական-մշակութային կյանքում իր հարատև ներկայությամբ, հայ իրականության վրա ունեցած ահռելի ազդեցությամբ ու ժողովրդական անանցանելի սիրով: Առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ էպոսը մեզ է հասել բանավոր փոխանցման արդյունքում և, կարելի է ասել, որ բանավոր հիշողությունում լավագույնս արտացոլվում է այն ամենը, ինչը հայտնվել է պատմագրության լուսանցքում: Այս իմաստով բանահյուսության նշանակությունն անուրանալի է, քանի որ այն թույլ է տալիս բացահայտել ինքնության խորքային շերտերը, որոնք, դուրս մնալով գրավոր պատմության էջերից, դրսևորվել են մշակույթի մեջ որպես առասպել, հեքիաթ, էպոս և այլն: Դիմակայելովժամանակի կործանիչ ազդեցությանը՝ էպոսը չի մոռացվել, այլ փոխանցվել է սերնդեսերունդ՝ հանդես գալով իբրև հավաքական ինքնության յուրօրինակ «այցեքարտ»:

Էպոսը համահավաք տարբերակով կոչվում է «Սասնա ծռեր»: Էպոսը կառուցվածքային առումով կազմված է վիպական չորս մասերից կամ ճյուղերից, որոնցից յուրաքանչյուրը կոչվել է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»: Հերոսների այս չորս սերունդը միմյանց հետ կապված են ազգակցական կապերով: «Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հերոսական անպարտելի ոգին է՝ պայմանավորված նրա նախահիմքում ընկած առասպելական դյուցազունների սխրանքներով և հայ ժողովրդի՝ իր ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ մղած դարավոր պայքարով: Էպոսի գաղափարական ոգին հայ ժողովրդի հերոսական մաքառումն է թշնամիների դեմ՝ հանուն ժողովրդի ազատության և անկախության, հայրենիքի և պետականության պահպանման:Էպոսի չորս ճյուղերում արտահայտված է հայը իր բոլոր իրարամերժ գծերով՝ սխրագործություններով ու դավաճանություններով, մեծագործություններով ու ազգադավ անտարբերությամբ, օտարամոլությամբ ու անմնացորդ նվիրումի արտահայտություններով: Էպոսում արտահայտված են ազգային ինքնության առանցքային գծեր, որոնց ուսումնասիրումը կարող է հնարավորություններ ընձեռնել քաղաքակրթական արդի հիմնախնդիրների իմաստավորման, մերօրյա իրականության բազմաթիվ բաց կողմերի ախտորոշման և

հաղթահարման համար: Եվ պատահական չէ, որ այս կարևոր հիմնախնդիրները ուսումնասիրելու նպատակով էպոսը ենթարկվել է բազմակողմանի քննության: Էպոսի ուսումնասիրությունը առավել գործնական փուլ է մտել 19-րդ դարի վերջին: Առաջին գրառողն ու ուսումնասիրողը Գարեգին Սրվանձտյանցն էր,ով 1874 թվականի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհրի դուռ» խորագիրը կրող գրքույկում գրառել է էպոսը: Էպոսի վերաբերյալ հրապարակի վրա գտնվող ուսումնասիրությունները դասակարգվում են երեք խմբերում բանասիրական գրականագիտական, իմաստասիրական և հոգեբանական: Բանասիրականգրականագիտական բնույթի ուսումնասիրությունները միտված են բացահայտելու էպոսի ծագման, կառուցվածքի, բովանդակության, տիպաբանական և ժանրային հատկանիշները (Գ. Սրվանձտյանց, Մ. Աբեղյան, Հ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Հ. Օրբելի, Բ. Խալաթեանց, Կ. Մելիք-Օհանջանյան, Գր. Գրիգորյան և ուրիշներ)[1]:Հայկական էպոսի նկատմամբ բանասերների, գրականագետների ու մշակութաբանների ուշադրությունը չի մարել նաև վերջին տասնամյակներում և շարունակվում է մինչ օրս (Ա. Եղիազարյան, Ս. Հարությունյան, Ա. Սահակյան, Լ. Աբրահամյան, Ա. Պետրոսյան, Լ. Խեչոյան, Թ. Տոնոյան, Ս. Ավետիսյան, Հ. Համբարձումյան և ուրիշներ)[2]:

Ուսումնասիրությունների երկրորդ խմբում ընդգրկված են այն աշխատանքները, որոնցում լուսաբանվել ու արժևորվել են հայկական էպոսի իմաստասիրական, բարոյահոգեբանական շերտերը, խորհրդանիշային, թաքնագիտական իմաստները և էպոսի ուրույն դերակատարությունն ազգային ինքնության հարացույցում (Գ. Նժդեհ, Է. Աթույան, Ա. Ոսկանյան, Ս. Զաքարյան, Ա. Արմին, Ս. Մանուկյան և ուրիշներ): Հարկ է նկատել, որ փիլիսոփայական տեսանկյունից էպոսի ուսումնասիրությունը նոր հորիզոններ է բացում ազգային ինքնության ու հոգեկերտվածքի բացահայտման բազմաբարդ գործընթացում, ինչպես նաև հնարավորություն է ընձեռում էպոսում արտացոլված փիլիսոփայական աշխարհայացքի վերհանմանն ու վերլուծությանը: Հենց այս խմբի ուսումնասիրողների աշխատություններն են հայտնվել նաև մեր այս հետազոտության հիմքում:

Քանի որ առասպելները, էպիկական պատումները, լեգենդներն ու ավանդազրույցները գալիս են դարերի խորքերից ու իրենց վրա կրում են այդ դարերի կենսակերպի ու մտածելակերպի հետքերը, ապա դրանք լավագույնս արտացոլում են Աստծո, բնության, հասարակության, մարդու, կյանքի, ազգի, հայրենիքի, պետության և այլ արժեքների ու երևույթների վերաբերյալ տվյալ ժողովրդի ինչպես ավանդական պատկերացումները, այնպես էլ դրանց փոխակերպումները: Այլ խոսքով, էպիկական կերպարների, հատկապես հերոս-դյուցազունների սխրագործությունների, վարք ու բարքի վերլուծությունն անսպառ նյութ կարող է տալ ոչ միայն նրանց, այլև տվյալ ազգի մտածելակերպն ու գործելակերպը, բարոյահոգեբանական յուրահատկությունները որոշ իմաստով հասկանալու ու գնահատելու համար: Դրանք, ի դեպ, առկա են ոչ միայն էպոսի հերոսների վարքագծում, այլև տարբեր ժամանակներում կառուցարկված հայոց ինքնության հարացույցներում, այսինքն՝ դրանք մեզանում տարածված, տիպական բնույթ ունեցող վարքաձևեր, մտակաղապարներ ու դիրքորոշումներ են:

«Սասնա ծռեր» էպոսի չորս ճյուղերից ամենանշանավորը և հայ ժողովրդին ամենահոգեհարազատը «Սասունցի Դավիթ» ճյուղն է: Այստեղ հայ ժողովուրդը նզովում է նենգ իշխաններին, և փառաբանում հայրենասեր, ուժեղ, քաջ հերոս Դավթին: Դավիթը դեռ փոքր ժամանակ Մելիքին ցույց է տալիս իր ուժը, նա չի հնազանդվում Մելիքին, չի անցնում թրի տակով: Մելիքի պատերազմ հայտարարելը Սասնա քաղաքին առիթ է հանդիսանում Դավթին ի

[1] Մ.Գիլավյան, Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005: էջ 15-22

[2] Լ. Ներսիսյան, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե., 2004 էջ 63-65

ցույց դնելու իր խոհեմությունն ու բազկի ուժը: Նա հասկանում է, որ այդ պատերազմը ուղղված է իր դեմ, այլ ոչ իր անմեղ ժողովրդի, ուստի և այս պատերազմին չպետք է մասնակից դառնային և ոչ մեկի անմեղ ժողովուրդը: Հանդիպելով երես առ երես Դավիթը ևս մեկ անգամ արիություն և դաստիարակություն է ցուցադրում Մելիքին, Մսրա ժողովրդին: Մելիքի խնդրանքով արդեն պայմանավորված երեքական հարվածներից առաջին եռյակը ուղում է Դավթի դեմ Մելիքը: Սակայն Դավիթն կանգնած է մնում ասես մի վիթխարի լեռ, որը դիմադրում է ցանկացած արհավիրքի[3]:

Հայոց ինքնության մեջ արմատավորված է իրականությունը գերազանցապես բարոյականության դիրքերից, բարոյական հասկացություններով (պարտք, պատասխանատվություն, արդարություն, խիղճ, ամոթ, պատիվ և այլն) իմաստավորումն ու գնահատումը, սեփական բարոյական չափանիշներով ուրիշների վարքի, այլ բարոյական համակարգերի արժեքավորումը՝ ի հաշիվ վարքի կարգավորման ու գնահատման իրավական, քաղաքական, տնտեսական և այլ ձևերի: Եվ որպես դրա հետևանք՝ հայոց ազգային նկարագրում տեսնում ենք՝ մարդասիրություն առանց սահմանների, թշնամու նկատմամբ ընդգծված մեծահոգություն ու ներողամտություն: հայկական էպոսում վիպական հերոսները փոքր հասակից չեն ստանում քիչ թե շատ համակարգված ռազմական (առնական) դաստիարակություն և սա ևս գալիս է խաղաղ ապրելու ձգտումից, ավելին, իրենք են մեծերից պահանջում իրենց ինչ-որ բան սովորեցնել: Այսպես, Մեծ Միհրը վանք-վարժատնում մի քիչ ուսանելուց հետո՝ յոթ տարեկանում, դիմում է մորը.

Մարե՛, հերիք էսպես մնամ.
Հրաման տու ինձ՝ էրթամ սարեր, քարեր շրջեմ,
Գազան ու հավք զարկեմ,
Մարդերու շարք մտնեմ:[4]

Մայրը հորդորում է «մարդկանց շարքերը» անցնելու համար սպասել մի քանի տարի, սակայն մանուկ Միհրը համառում է՝ ասելով՝ «Աղեկ է, որ հիմիկվանե պատրաստ ըլնեմ՝ // Թըշնամու դե՛մ կայնեմ»[5]: Այստեղ ընդգծում է սեփական տունն ու հողը պաշտպանելու ձգտումը:Եվ էպոսում բազմաթիվ են դեպքերը, երբ թշնամին շատ լավ իմանալով մեր ուժը կա՛մ դիմում է խորամանության, կա՛մ որոշում է հաշտության ձեռք մեկնել: Միհրի որդի Դավիթը անցնում է գրեթե հենց ճանապարհը. փոքր Մըսրա Մելիքը, հանձին Դավթի, կանխազգալով իր թշնամուն, չի ցանկանում նրան մասնակից դարձնել ուժային ու մարտական խաղերին, որպեսզի նա չմարզվի ու չհզորանա: : Ի վերջո, չենթարկվելով Մելիքին՝ չանցնելով նրա թրի տակով, Դավիթը վերադառնում է Սասուն և հարազատների հորդորանքով անցնում «խաղաղ զբաղմունքի»՝ դառնում գառնարած, հետո՝ նախրապան, որսորդ և այլն: Ո՛չ մի արյունահեղություն՝ բացի մի քանի «ծուռ» արարքներից: Նույնիսկ Ծովասարում նա քանդում է իր հոր կառուցած պարիսպը, բաց թողնում վայրի գազաններին, ընդսմին, իր հետ եկած մարդկանց չի թույլատրում որսալ գերի գազաններին.

Էհե՛յ, ձեզ իրավունք չկա…
Էնոնցից մե՛կն էլ չը սպանե՛ք:
… Հրողբեր, ջանըմ,
Կապուկ տեղ պա՛պս էլ կը զարկի.

[3] .Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. էջ 54-58
[4] Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Եր., 1989, էջ 168
[5] Նույն տեղում, էջ 168:

Տղամարդն է՛ն է, որ արձակի ու նո՛ր զարկի,
Չէ՞ որ էնոնք գերի են, հրողբեր,
Մարդ էլ գերիին զարկի՞[6]

Եթե նույնիսկ Դավիթի մյուս արարքներից բխող արժեքային նորմերի մասին ոչինչ չասենք, արդեն իսկ, շատ տիպական է այս նախադասություն. «Մարդ էլ գերիին զարկի»:

Սասունցի Դավիթը, մենամարտի է դուրս գալիս իր կեսեղբայր Մելիքի դեմ՝ առաջնորդվելով իր ցեղի բարոյականության սկզբունքներով: Նախ, Դավիթը համաձայնվում է, որ առաջինը հարվածներ հասցնի Մելիքը, երկրորդ, երբ հերթը հասնում իրեն, սկսում է զիջումներ անել,հօգուտ Մելիքի փոխել մենամարտի պայմանները, երրորդ, առաջին երկու հարվածները բախշում է Մելիքի մորն ու քրոջը՝ չկարողանալով դիմանալ նրանց բերած բարոյական փաստարկներին, ավելի ճիշտ՝ իր խղճին՝ դրանով իսկ վտանգելով իր գործի հաջողությունը: (Ի դեպ, միամիտ Դավիթը «բարոյական» հարց է տալիս Իսմիլ խաթունին.

Մարե, ինչի՞ դուն չուր հիմիկ,

Մելիքի զարկ կը գար մեջ իմ գլխուն,

Մեկ մ՛էլ չասիր՝ Մելի՛ք, զարկ մի ինձի՛ բախշի…[7]

Գրեթե բոլոր ազգերի մեջ թշնամու նկատմամբ վերաբերմունքը դրսևորվում է գրեթե նույն զգացմունքներով ու դիրքորոշումներով՝ ատելություն, զզվանք, անհանդուրժողականություն, ագրեսիվություն, բացասական հատկությունների վերագրում և այլն: Այնինչ մեզանում կարելի է ասել չկա առհասարակ այլատյացություն, մասնավորապես օտարի նկատմամբ ձևավորված ու կայունացած թշնամական վերաբերմունք: Դ. Դեմիրճյանը գրում է. «Հայի ամենամեծ առաքինությու՞ննն ես ուզում - ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մեջ: Ի՞նչ եղավ իրպատմությունը - զարհուրելի ջարդեր, խոշտանգում, բնաջնջում...[8]

Այս կարծիքը պաշտպանում է նաև հոգեբան Հ. Պողոսյանը. «Հայը հակառակ աշխարհի մէջ ամենէն շատ հալածուող ու տանջուող ժողովուրդը ըլլալուն, ցուցադրած է իր հալածողներուն հանդէպամենէն շատ ներողամտութեան ոգին: … Հայ ազգի նկարագրինմէջ ամենէն տկար յատկանիշ մը եթե կայ՝ այդ ալ արդարութեան եւ հետեւաբար վրէժի ոգւոյն պակասը եղած է: Հայը այն աստիճանի ներողամտութեան ոգի ցուցադրած է, որ անիկա գերազանցած է նաեւ Քրիստոսը»:[9] Էպոսի գլխավոր հերոսները փառամոլ չեն, բայց նաև իշխանատենչ ու իշխանություն սիրող չեն: Սանասարն ու Բաղդասարը, խալիֆի դատաստանը տեսնելով և նրա զորքը թրի տակով անցկացնելուց հետո, փոխանակ տիրանան այդ ընդարձակ թագավորությանը, թողնում-հեռանում են այդ երկրից: Նրանք մերժում են նաև իրենց պապի՝ Գագիկ թագավորի խնդրանքը, ժառանգելու իր թագավորությունը: Մեծ Մհերը չի ընդունում այրիացած Իսմիլ խաթունի առաջարկը՝ բազմելու Մըսրի թագավորության գահին: Դավիթը սպանում է Մելիքին և, ըստ կյանքի օրենքի, հաղթողի իրավունքով պետք է տիրանա նրա երկրին, հավաքի տուրքեր, Մըսրը դարձնի հարկատու, ավարով, գանձերով ու ստրուկներով լցնի Սասունը և այլն: Մինչդեռ սասունցիները Մըսրից բերում են ընդամենը զույգ եզ և Մելիքի ականջը: Դավիթը մեծահոգաբար

[6] Նույն տեղում, էջ 272:
[7] Նույն տեղում, էջ 338
[8] Դեմիրճյան Դ., Հայը, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14, Եր., 1987, էջ 463:
[9] Պօղոսեան Յ.Պ.,Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրե, 1958, էջ 706-707

պարտված զորքին հրամայում է տուն գնալ և խորհուրդ տալիս էլ երբեք չհարձակվել Սասունի վրա: Գնացեք ձեր տները, ասում է նա, և մեզ հանգիստ թողեք, մեզ ոչինչ պետք չէ ձեզանից: Նույն կերպ է վարվում Փոքր Միհրը. օտար երկրում հերթական հաղթանակից հետո նրան առաջարկում են լինել տիրակալ, բայց նա համեստաբար մերժում է՝

Ես ձենե բան չեմ ուզի,

Ո՛չ թագավոր կ՛ըլնեմ:

Ո՛չ քաղքի տեր կ՛ըլնեմ:

Ես Դավթի տղա Միհե՛րն եմ,

Ես չեմ կարնա էստեղ նստի…:[10]

էպոսի հերոսների վարքը հումանիզմի ու հանդուրժողականության բարձրագույն դրսևորում է: Էպոսում, առասպելներում և հեքիաթներում նրանք ուժեղ են, որովհետև բարոյական են և բարոյական են, որովհետև ուժեղ են: Բայց երբ իրականում շրջապատված ես ռազմատենչ ու իշխանատենչ ցեղերով կամ պետություններով, որոնք առաջնորդվում են բարոյականության ու խաղի բոլորովին ուրիշ կանոններով, որոնք պատրաստ են ցանկացած պահի հոշոտելու, բնաջնջելու իրենց անպաշտպան դրկիցներին, ապա այս հումանիզմին զուգահեռ դրսևորվում է նաև այդ գերբնական ուժը: Էպոսում կա այն ճշմարիտ միտքը, թե նվաճողներն ու բռնակալներն են հրահրում պատերազմներ: Հասարակ մարդիկ այդ պատերազմի հետ կապ չունեն, ավելին, նրանք դեմ են պատերազմին: Սա էպոսի գաղափարականհարստության այն կետն է, որն առկա է միջնադարյան հայ մատենագրության, ինչպես նաև հայ նոր գրականության մեջ:

[10] Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Եր., 1989, էջ 410:

ԳԼՈՒԽ 2

«Սասնա ծռեր» էպոսի նպատակաուղղված ուսուցումը ավագ դպրոցում

Հայ գրականություն առարկան դպրոցական ծրագիր այն առարկաներից է, որը հնարավորություն է տալիս ուսուցչին զարգացնել աշակերտի մոտ բազմաթիվ կարողունակություններ: Այս առումով գրական մեկ ստեղծագործության ուսումնասիրումը կարող է նախադուռ հանդիսանալ իմացական և մտածական,ինչպես նաև արժեհամակարգային մի շարք կարողությունների ձևավորման և զարգացման համար: Եվ ի վերջո ամենակարևոր արժեքային գիծը, որը ձևավորում է հայ գրականությունը՝ հայրենասիրությունն է: «Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության»:

Հայրենասիրական դաստիարակությունը,հանդիսանալով անձի համակողմանի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ աստիճանական և անընդհատ իրագործվող սիրո և հարգանքի դրսևորումն է: Այն ընդունակ է անձի մեջ ձևավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը և հարգանքը հարազատ քաղաքի, ժողովրդի, ընտանիքի, հայրենիքի պատմության արժանի էջերի նկատմամբ և վերջապես ձգտումը՝ տեսնել հայրենիքը ծաղկուն և բարգավաճ: Հայրենասիրություն հասկացությունը օրգանական կապի մեջ է տվյալ երկրի պատմության հետ, քանի որ հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, նրա մշակույթի, հոգևոր կայացման ընթացքն է, անցյալը, ներկան,ինչպես նաև ապագան: Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում[11]՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի

[11] . https://escs.am/files/files/2020-07-17/5274af14a6831d415b35417b59d851a7.pdf

նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը: Ինչպես ուսուցման գործընթացի կազմակերպման, այնպես էլ սովորողների արժեհամակարգի ձևավորման հարցում կարևոր է ունենալ հստակ մեթոդների առկայություն: Ըստ այդմ,նախ ցանկանում ենք նշել, թե ինչ գործոններ են ազդում սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա, որպեսզի դրանց միջոցով փորձենք վեր հանել այն հիմնական մեթոդները, որոնց կիրառմամբ հնարավոր է սովորողների մեջ ձևավորել համապատասխան արժեհամակարգը:

Սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա ազդում են ավանդական գործոնները, այսինքն՝ աշակերտի մոտ աշխարհի նկատմամբ վերաբերմունքը և հասարակության հետ հարաբերությունը, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքում և սոցիալական միջավայրում:

Հաջորդ կարևոր գործոնը, որն ազդում է սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա տարիքային գործոնն է,քանի որ տարբեր տարիքային խմբեր ունեն տարբեր արժեքներ,տարբեր պատկերացումներ և աշխարհընկալում, ուստի նրանց արժեհամակարգի վրա ազդող գործոնների ուսումնասիրման արդյունքում կարևոր է հաշվի առնել տարիքային շեմը:

Մյուս կարևոր գործոնը, որ ազդում է սովորողների արժեհամակարգի ձևավորման վրա միջանձնային հարաբերություններն են, քանի որ շատ կարևոր նշանակություն ունեն այն մարդիկ, ովքեր շրջապատումեն աշակերտներին, իսկ այս հարցում հատկապես մեծ է ուսուցիչների դերը:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծածմշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնքժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:Ուստի 21- րդ դարի

դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը,աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Երեխաների դաստիարակությունը պետք է իրականացվի անընդհատ, դասարանում, գործողություններում, նույնիսկ խաղի մեջ եւ տանը: Մանկավարժական աշխատանքը կառուցված է այնպես, որ անցնում է սրտով,բառացիորեն մանկապարտեզի յուրաքանչյուր աշակերտ: Հայրենիքի հանդեպ նախադպրոցական սերը սկսվում է նրա մոտ իրեն վերաբերմունքի ձեւավորմամբ՝մայրիկի, հայրիկի, պապի, տատիկի հետ, իր տանը սիրով, այն փողոցը, որտեղ նա ապրում է:[12]

Պետք է հստակ գիտակցել, որ հայրենիքը սոսկ աշխարհագրական միջավայր չէ, այլ հոգևոր արժեքներով հարուստ ու սրբազան անկյուն, տարածք, որը քոնն է և յուրաքանչյուր հայինը: Ա. Ղազարոսյանը հիշեցնում է, որ հայրենասիրությունն ամենաուղղակի առնչությունն ունի ծնողասիրության ու որդեսիրության հետ, և որ պատմությունն այդ իմաստով լավագույն ուսուցիչը կարող է լինել աշակերտների համար: Սովորողների բարոյական նորմերի, հայրենասիրության ձևավորման արդյունավետությունը երևում է այն ժամանակ, երբ դաստիարակության խոսքային մեթոդները զուգակցվում են գործունեության տարբեր ձևերի հետ, և աշակերտը այդ գիտելիքները դրսևորում է իր առօրյա վարքում՝ տանը, դպրոցում, ընկերների շրջանում:

Մեր էպոսը մեզ է հասել անաղարտ վիճակում, առանց անցնելու անհատական ստեղծագործության բովով, որով ավելի է բարձրանում նրա արժեքը որպես բուն ժողովրդական մտածելակերպի արտահայտություն: Եվ եթե այսօր խոսք է բացվում «Սասունցի Դավթի» հարյուրամյա գրավոր կյանքի մասին, դրա տակ հասկանում ենք ժողովրդի կենդանի խոսքից կատարված ստուգապատում գրառումները միայն: Ժողովրդի անաղարտ ստեղծագործություն լինելու հանգամանքը մեր էպոսի յուրահատուկ ու տարբերակիչ գծերից մեկն է:[13]

«Սասունցի Դավիթը» ստեղծվել է մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ մեր ժողովուրդը թևակոխել էր հասուն ֆեոդալիզմի և քրիստոնեական հավատի տիրապետության դարաշրջանը, պավլիկյան ու թոնդրակյան շարժումների ձևով պայքար ծավալել՝ վերացնելու իրեն կեղեքող շահագործումն ու սոցիալական անարդարությունները: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ էպոսում դիցաբանական պատկերացումների համեմատությամբ առավել մեծ տեղ են գրավում իրական, պատմական եղելությունների գեղարվեստական ընդհանրացումները,

---

[12] . https://escs.am/files/files/2020-07-17/5274af14a6831d415b35417b59d851a7.pdf

[13] Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ. էջ 54-58

երևույթների խոր ուճշմարտացի մեկնաբանությունները: Ստեղծագործող ժողովուրդը մի հանճարեղ ամբողջականությամբ էպոսում սինթեզել է բոլոր այն նվաճումներն ու ձեռքբերումները, որ ստեղծել է նախապատմական ժամանակներից սկսած, փայլուն դրվագումներով մարմնավորել իր հազարամյակների փորձն ու իմաստությունը, բնության և հասարակական կյանքի երևույթների, գեղեցիկի ու վսեմի, մարդկայինի ու արդարության նկատմամբ ունեցած ըմբռնումները, գաղափարական զենք է դարձրել այն ամեն լավն ու համամարդկայինը, որ կազմում է ամեն մի ժողովրդի հոգևոր գոյության հիմքը: Եվ այդ ամենը՝ ձուլված օտար նվաճողների դեմ մեր նախնիների դարավոր պայքարի ու մաքառումների հերոսական դրվագներին, դրված պատմական որոշակի հողի վրա, հագցրած պատմականության զգեստ: Ինչքան էլ հերոսների մի զգալի մասը բնության երևույթների մարմնավորում է և անդրադարձնում է ժողովրդի դիցաբանական պատկերացումները, էպոսը խորապես պատմական, պատմականության մեջ համապարփակ մի եզակի ստեղծագործություն է: Իհարկե, պատմականություն ասելով պետք է հասկանալ ոչ թե որպես ժամանակագրական հաջորդականության տրամաբանությամբ զարգացող իրականությունը, այլ պատմական իրադարձությունների արձագանքը, մի արձագանք, որը էպոսում ստանում է պատմությունից միանգամայն տարբեր ժամանակագրություն՝ իր ետևառաջությամբ, ստեղծագործության ընդհանուր կառուցվածքի մեջ իր «բնական» տեղը կանգնելու անհրաժեշտությամբ: Այնպես որ, զարմանալի չէ, երբ, ասենք, մայրիշխանության կամ տոհմատիրական ժամանակաշրջանին հատուկ հարաբերությունների և ըմբռնումների ենք հանդիպում նույնիսկ էպոսի վերջին ճյուղում, երբ ժողովուրդը պատկերում է արդեն ներքին հարստահարիչների՝ ֆեոդալների ու եկեղեցականության դեմ իր պայքարը: Այս տեսակետից խիստ ուշագրավ են էպոսի շատ հերոսներ՝ իրենց պատմական հիմքով և բնական ու տիեզերական երևույթները մարմնավորող հատկանիշներով: Այսպես: Էպոսն սկսվում է 10-րդ դարի պատմական գործիչ Գագիկ թագավորի անվան հիշատակությամբ: Գագիկի թոռներ են ներկայացվում Սանասարն ու Բաղդասարը, որոնք, սակայն, ասորական Սենեքերիմ թագավորի որդիներն են և մ.թ.ա. 681 թվականին ապստամբել են իրենց հոր դեմ, սպանել նրան, բայց գահին տիրացած Ասուրբանդ եղբոր հաշվեհարդարից խուսափելով՝ հասել են Սասունի լեռները, բնակություն հաստատել այնտեղ: Ժողովուրդն իր հիշողության ծալքերում ամուր պահել է պատմական իրականությունը և կիսապատմական, կիսամիֆոլոգիական գունավորումով ներկայացրել էպոսում: Դիտարկվել է նաև, որ Առյուծաձև Միհրի Մսըր գնալու և Մսրա գահը ամուր պահելու մեջ արձագանք են գտել 12-րդ դարի երկրորդ կեսի իրադարձությունները, երբ Պահլավունի իշխանների գլխավորած հայկական զորքը 30-ամյա մի ժամանակաշրջանում դարձել է Եգիպտոսի Ֆաթիմյան տիրակալների նեցուկը՝ հասնելով մեծամեծ հաջողությունների: Ենթադրվում է, որ Միհրը այդտեղ էլ պետք է առյուծ ձևեր, որովհետև Հայաստանում առյուծ չի եղել: Ստացվում է, որ պատմական ստույգ ժամանակագրությունը նկատի առնելու դեպքում պապը՝ Գագիկ թագավորը, իր թոռներից փոքր է շուրջ 17 դարով, իսկ Մեծ Միհրի ու իր հոր արանքում երկու հազար տարուց ավելի ժամանակահատված կա:

Սակայն այստեղ էպոսի ժանրային յուրահատկության տեսակետից ոչ մի տարօրինակություն չկա: Պատմական ժամանակաշրջանների այսպիսի հսկայական անախրոնիզմները միջոց են եղել, որ ժողովուրդը հազարամ-յակների իր պայքարն ու մաքառումները, իր ձգտումներն ու երազանքները տեղադրի արաբական նվաճողների դեմ պայքարի ու հաղթանակի պատմական հողի վրա, բովանդակավորի այն: Եվ քանի որ այդ պայքարը համազգային-համաժողովրդական է՝ ծավալված սեփական ազատությունը պաշտպանելու անհրաժեշտության թելադրանքով, Սասնա դյուցազունները արաբական նվաճողների դեմ հանած իրենց Թուր Կեծակին շողացնում

են հայ ժողովրդի բոլոր ոսոխների գլխին՝ սկսած նախապատմական ժամանակներից մինչև Աջմու Շապուհ և Բապ Ֆրենկը, որոնց անուններում իր արձագանքն է գտել պարսկական տիրակալների ու խաչակիրների դեմ մղած պայքարը: Էպոսի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է, որն իր գեղարվեստական մարմնավորումն է գտել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերպարներում: Սասնա դյուցազունները, իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ, միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորումն են և բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ: Սանասարն ու Բաղդասարը, հիմնադրելով Սասնա բերդը, ապահովում են ժողովրդի անվտանգությունն ու քրտնաթոր աշխատանքի անձեռնմխելիությունը: Նրանք, ինչպես նաև նրանց հետնորդները, իրենց գերմարդկային ուժն օգտագործում են ոչ թե սեփական փառք ու իշխանություն ձեռք բերելու նպատակով, այլ ի սպաս են դնում ժողովրդի բարօրությանն ու ազատ կյանքին: Հենց այսպես ու այստեղից էլ սկսվում է Սասնա տան պատմությունը և փորձենք ներկայացնել ուսուցման ուղեցույց ավագ դասարանի աշակերտների համար: «Սասնա ծռեր» էպոսի որոշ հատվածների ուսուցումը սկսվում է դեռ միջին դպրոցական տարիքից,որը եզրափակվում է 9-րդ դասարանում էպոսի որոշ չափով համապարփակ ուսուցմամբ: 10-րդ դասարանում դարձյալ ունենք անդրադարձ «Սասնա ծռեր» էպոսին և սա պատահական չէ,քանի որ արդեն իսկ ենթադրվում է, որ աշակերտը 10-րդ դասարանում պետք է ընթերցած լինի էպոսը: Քանի որ աշակերտը 10-րդ դասարանում արդեն ծանոթ է էպոսին կարելի է ուսուցումը կազմակերպել նպատակուղղված եղանակով՝ այս դեպքում առաջ բերելով հայրենասիրության գաղափարի արծարծումը: Այդ նպատակով կարելի է նախ և առաջ դասաժամերից մեկը տրամադրել սյուժեն վերհիշելուն՝ անդրադարձ կատարելով էպոսի գրառման պատմությանը, ճյուղերին և այդ ճյուղերում հադես եկող կերպարներին: Հաջորդ դասաժամերին կարելի է աշխատել բնագրի հետ: Մասնավորապես, կարելի է կատարել առանձին հատվածների վերլուծություն՝ բերելով օրինակներ և զուգահեռներ: Խոսելով հայրենասիրական թեմայի մասին՝ կարելի է դասը կազմակերպել ուղղորդող հարցերի միջոցով.

Ի՞նչն եք կարևորում էպոսում:

Էպոսի ո՞ր հատվածում է առավել արտահայտված ազգային ոգին և հայրենասիրությունը:

Էպոսի ո՞ր հերոսին կցանկանայիք տեղափոխել մեր իրականություն և ի՞նչ հարց կտայիք նրան:

Արդիակա՞ն է մեր էպոսն այսօր և ի՞նչ ընդհանրություններ կան ներկայիս իրավիճակի հետ:

Ի՞նչն է պակասում մեզ այսօր:

Սրանք ուղղակի առաջարկվող հարցերի նմուշներ են, որոնք կարելի է ավելի զարգացնել և հարցերից յուրաքանչյուրի շուրջ կազմակերպել բանավիճային քննարկում: Ավագ դասարանի աշակերտների համար առանցքային է այն հարցը, որ ուսուցիչը թույլ տա նրանց արտահայտել իրենց կարծիքները և հստակ որակումներ չտրվեն այս կամ այն կարծիքի ճիշտ կամ սխալ լինելուն: Հենց այս մեթոդի միջոցով կարելի է զարգացնել նաև քննադատական մտածողությունը և,իհարկե, կազմված հարցերը,ըստ ուսուցչի ցանկության, կարող են նպաստել էպոսի այս կամ

այն շերտի բացահայտմանը: Այսպես՝ այս դեպքում շեշտադրվել է հայրենասիրությունը, բայց կարելի է հարցեր կազմել նաև ընտանիքի մոդելի մասին, կանանց կերպարների մասին և այլն:

Հարցերի քննարկումից հետո կարելի է հնարավորություն տալ աշակերտներին,որ իրենք փորձեն մեկ հարց կազմել էպոսի գաղափարական կողմի շրջանակում և ուղղեն իրենց դասընկներներին: Այս քննարկումը կարող է նաև նախադուռ հանդիսանալ աշակերտներին գրական զուգահեռների դաշտ բերելու համար: 10-րդ դասարանի աշակերտները հավանաբար ծանոթ չեն Լևոն Խեչոյանի «Միհերի դռան գիրքը» վեպին, որտեղ հեղինակը նորովի է մոտենում էպոսի ներքին վերլուծությանը: «Միհերի դռան գիրքը» վեպը իրականում Խեչոյան արվեստագետի և մարդու պատգամն է մեզ՝ ապրողներիս և մեր երկրի ապագան կերտողների: Ակնարկային և լրագրողական ոճական հնարանքների, գիտական և գրողական վերլուծությունների և նկարագրությունների միահյուսումը՝ միայն մեկ նպատակ է հետապնդում. Խեչոյանը ամեն ինչ՝ անգամ իր գրականությունն է դնում զոհասեղանին՝ աշխարհում արդարություն հաստատելու համար: Խեչոյանը առաջին հերթին տալիս է մեկ կարևոր հարց. «Ի՞նչ կլինի, եթե Միհերը դուրս գա Ագռավաքարից և մենք պատրա՞ստ ենք Միհերին տեսնել Ագռավաքարից և բոլոր կաշկանդող երևույթներից դուրս»: Այս հարցը կարելի է տալ աշակերտներին, բայց միայն վեպի ընթերցանությունից հետո: Սա կարելի է համարել էպոսի ուսուցումը նոր և առավել արդյունավետ եղանակ, որովհետև գաղտնիք չէ, որ այն նյութը, որին արդեն իսկ ծանոթ է աշակերտը ինչ-որ չափով կորցնում է իր հետաքրքրությունը: Այլ կերպ ասած կարծիք է առաջանում, որ տվյալ նյութին մասին այլևս նոր ասելիք չկա, բայց այս եղանակով աշակերտը սկսում է կարդալ «ծանոթ» գրական երկի մասին դեռևս իրենց համար անծանոթ համարվող հեղինակի ուսումնասիրություն, որտեղ էպոսը ներկայացված է բոլորովին այլ դիտանկյունից և էպոսի քննությունը կգնա այլ ճանապարհով և կդառնա ավելի արդիական՝ չկորցնելով հարենասիրական և ազգապահմանման միտումները և ի վերջո կտա այն կարևոր հարցերի պատասխանները՝

Ո՞վ ենք մենք:

Ի՞նչ ճանապարհ ենք անցել այս մի բուռ հայրենիքը ունենալու համար:

Եվ ի՞նչ պետք է անենք այս հայրենիքի համար, ո՞րն է մեր պարտքն ու առաքելությունը:

Մյուս կողմը, որով կարող է ընդանալու ուսուցումը՝ Հոգևոր Հայաստանի գաղափարն է, որը բերում է Վահան Տերյանը:

Այդ Հոգևոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատանք էպահանջում, անթիվ կյանքերի տոկուն հավատ և գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ,գուցե ավելի դժվար, ավելի ահավոր զոհաբերում, քան արյունի զոհաբերումը: Ռաֆֆին,Արծրունին, Նալբանդյանը, Դուրյանը նույնպես ասպետներ են, գուցե ավելի մեծ հերոսներեն, քան նրանք, որ կռվի դաշտում են զոհաբերում իրենց կյանքը: Մի՞թե անվերջչարչարանքի և գերագույն մի բաղձանքի, անվերջ զրկանքների և վսեմ մի հավատի պայծառպատկերը չէ մեր Հոգևոր Հայրենիքի ասպետ-զավակների կյանքը: Հոգևոր Հայրենիքը, ինչպես և ֆիզիկականը ավերված երկիր է, և այդ ավեր ու անավարտ շենքերըկանգնեցնելու համար հարկավոր է սեր, անձնվիրություն, ոգևորություն: ՀոգևորՀայաստանը հոգով է կենդանի: Դատարկ խոսքեր են հայերի փոքր ազգ լինելու մասին հնչող ճառերը. ո՛չ բելգիացիք են մեծ ազգ, ո՛չ նորվեգացիք, մինչդեռ որպիսի դյութականանուններ են դրանք… Այսօրվա ահավոր անցքերը, ինչպես շատ իրավացի նկատել է մի հայտնի ռուս գրող,

կփոխեն ոչ միայն աշխարհագրական սահմանագծերը, այլևգաղափարական աշխարհում պիտի մի նոր հեղաշրջում առաջացնեն: Այդ անցքերը անհետ չեն անցնի հոգու համար: Հայերի մեռած կյանքն ասես կենդանության նշաններ է ցույցտալիս: Թող լինեն այդ նշանները տարօրինակ և երբեմն այլանդակ, բայց այդ տարօրինակություններն ու այլանդակությունները Տերյանը կուզեր վերագրել անցյալին,սակայն այն պահում է իր ստվերը նաև բացվող ապագայի վրա: Նյութական կորուստները միշտ կարելի է վերադարձնել, իսկ հոգևոր կորուստն անդառնալի է: Չպետք է մատնանշել արտաքին արգելքները՝ դրանք միշտ կան, և դրանց դեմ պետք է կռվել: Բայց նախ պետք էկամք, հավատ, գիտակցություն. առանց այդ՝ ավելորդ է արտաքին արգելքների դեմ կռվելը…[14]

Տերյանը դեռ այն ժամանակ խոսում էր մի շատ ցավոտ փաստի մասին: Այո՛, հեռացել ենք մեր ազգայինից,կորցրել ու մոռացել ենք այն գաղափարական հենքն ու արժեքները, որոնք մեզ հայ են պահել և ստիպել են տանել աշխարհի երեսին եղած բոլոր փորձությունները՝ կոտորած, սով, երկրաշարժ,անթիվ ու անհամար պատերազմներ և ի վերջո նվաճողներ և թշնամիներ, որոնք ամեն անգամ վստահ են եղել, որ փոթորկի նման կանցնեն Հայաստանի վրայով և փոշեհատիկ անգամ չեն թողնի, բայց մոխիրի միջից առասպելական թռչունի նման դարձյալ վեր ենք խոյացել և պարզել մեր թևերը՝ պատրաստվելով թռիչքի:

Աշակերտներին պետք է սովորեցնել նաև այս գաղափարը: Մենք իրավունք չունենք կորցնելու այն կարևորը, որը մեզ եկել ու հասել է էպոսից, իրավունք չունենք աչք փակելու այն Հոգևոր Հայաստանի վրա, որը կա մեզնից յուրաքանչյուրի ներսում, չպետք է անտարբեր լինենք այն արժեքների պահպանման հարցում, որոնցով պայմանավորված է մեր երկրի ապագան: Եվ աշխատանքը ու ուսուցման մեթոդական հնարը ավարտենք հենց Տերյանի խոսքերով.

«Քննեցեք ձեր սիրտը և նայեցեք,թե կա արդյոք այնտեղ հավատ,որով պիտի կենդանանա մեր այդ հոգևոր Հայաստանին, եթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը նյութական Հայաստանի համար, նա չի կենդանանա, նա հոգով կարող է միայն կենդանի լինել:

Չպետք է կամենանք մեր հույսը և ապագան նյութական Հայաստանի գաղափարի վրա հիմնել, այլ պիտի տենչանք ու աշխատենք հոգևոր Հայաստանի համար»:[15]

[14] https://tarntercum.ru/2015/09/blog-post_44.html

[15] https://tarntercum.ru/2015/09/blog-post_44.html

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ: Արցախի գոյապայքարի այսօրվա մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը: Այս հարցն ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում հայտնված մեր պատմական հայրենիքի՝ Արցախի ապագան վտանգված է, իսկ վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր, վկան՝ Արցախի քառօրյա պատերազմը: «Հայրենասիրություն» բառից, նշանակում է հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը»: Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն, ազգային հոգեկերտվածք՝ նպաստելով երեխայի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը, և ամենևին էլ պատահական չէ, որ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական պատկերացումների ստեղծումը խարսխվում է հայրենիքի նվաճումների հանդեպ աշակերտի հպարտության գիտակցման վրա, որը դառնում է հայրենասիրության հիմքը: Հանրակրթության 2-րդ աստիճանում հիմնական դպրոցի սովորողների հայրենասիրական մտածողության զարգացման համար ի նպաստ են դրվում ուսումնական տարբեր բնագավառների ընձեռած հնարավորությունները: Բայց առավել կարևոր ու առանցքային է նաև որոշ արժեքների մասին խոսել ավագ դպրոցական տարիքում, երբ աշակերտը, որը արդեն իսկ դեռահաս է նորովի է ընդունում և ճանաչում աշխարհը և շատ կարևոր է, որ այդ աշխարհը նրա մտապատկերում կառուցվի ճիշտ հիմքի և շինվածքի վրա:

Այսպիսով, ինչպես ցույց տվեց հետազոտությունը, պրակտիկ գործունեության տարբեր ձևերի և միջոցների ստեղծագործական համադրումը և կիրառումը արդյունավետ է արժեքային համակարգի ձևավորման գործում:

Կատարած տեսական հետազոտության արդյունքների վերլուծությունը, դրանց քննարկումը և ընդհանրացումը հնարավորություն ընձեռնեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

1.Հասարակական բուռն զարգացումները, ժամանակակից կրթական բարեփոխումները կյանքի են կոչել նոր՝ տնտեսական, գիտական, մշակութային և այլ պահանջներ, որոնք էլ պայմանավորել են մանկավարժական գործընթացի արմատական փոփոխությունները՝ ուսուցիչ-աշակերտ

հարաբերությունների վերանայում, դասավանդման նոր մեթոդների և ձևերի, մանկավարժական նոր տեխնոլոգիաների որոնում ու կիրառում և այլն: Եվ այս՝ անընդհատ փոփոխվող դարաշրջանում, հարկ է գտնել և պահպանել այն կարևոր արժեքները, որոնք կօգնեն ձևավորել իրավագիտակից և հայրենասեր քաղաքացի:

2. Տեսական վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է, էպոսի կարևորագույն դերը աժեքների ձևավորման և պատմական անցյալի և ներկայի արժևորման գործում:

3. Տեսական և փորձարարական աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ էպոսի ուսուցման մի քանի եղանակն արդյունավետ կերպով կարող են կիրառվել ժամանակակից դպրոցի ուսուցման գործընթացում՝ պահպանելով էպոսի նկատմամբ եղած բոլոր ժամանակների հետաքրքրությունը:

4. Փորձարարական հետազոտության արդյունքները վկայում են, «Հայ գրականություն» առարկայի դասավանդման գործընթացում, մասնավորապես 10-րդ դասարանում, կարելի է էպոսի ուսուցումը կազմակերպել զուգահեռ իրողությունների քննությամբ,ինչը թույլ կտա էպոսը բացահայտել այլ կողմերից:

5. Դասը կարելի է տանել այն ուղղությամբ, որ այսօրվա Հայաստանի գոյության համար մենք պարտական ենք Սասնա տան հերոսներից մինչև մեր օրերը եղած բոլոր հերոսներին, բայց այս Հայաստանի պահպանման համար գալիք սերունդը պետք է շնորհակալ լինի մեզ: Եվ ուրեմն թողնենք նրանց առավել ապահով, առավել կենսունակ Հայաստան՝ Հոգևոր Հայաստան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Գիլավյան Մ., Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Ե., 2005:

2.Դեմիրճյան Դ., Հայը, Երկերի ժողովածու 14 հատորով, հ. 14, Եր., 1987:

3. Ղույումչյան Գ. Ե. Գիրք 1, Մանկավարժություն,Երևան,2005թ.:

4. Ներսիսյան Լ, Նորագույն շրջանի մանկապատանեկան արձակը, Ե.,2004:

5. Պողոսեան Յ.Պ.,Ներածութիւն հայ հոգեբանութեան, Գահիրե, 1958:

6. Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Եր., 1989:

7. https://escs.am/files/files/2020-07-17/5274af14a6831d415b35417b59d851a7.pdf

8. https://tarntercum.ru/2015/09/blog-post_44.html